## ԳԱՒԱԶԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՈՐՔ ԻՀՐԷԻՑ ԽԱՌՆԵԱԼՔ ԷԻՆ ՑԱԶԳՍ ՀԱՅՈՑ ԵՒ ԿՈՉԵՑԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ։

Սոքա Թագադիրք էին Արշակունեաց թագաւորացն. իսկ 'ի բառնալ թագաւորացն մերոց զիշխանսն մեր՝ որպէս գրեցաք, նախ ընդ ձեռամբ Պարսից՝ Մարզպանք տիրեցին Հայոց. և յետոյ 'ի Տաճկաց առնուին զիշխանութիւնն՝ հարկս տալով նոցա՝ մինչև 'ի ժամանակս Յոհն Կաթուղիկոսին։ Իսկ ապա 'ի սեռէ Բագարատ իշխանին՝ Աշոտ անուն ոմն՝ առաջին եկաց իշխան Հայոց՝ ամն ՅԼԴ. և տեղաւորեաց զՀայոց իշխանսն 'ի տեղիս իւրեանց՝ որ 'ի քաղաքն Անի. և զարգացեալ ծոխացան օր ըստ օրէ որդւոց յորդիս կարգաւ այսպէս։

Սմբատ առաջին՝ որդի Աշոտոյ՝ եկաց իշխան՝ ամն ԻԲ. ընկալեալ 'ի հօրէն զհա-